անում նրանց կապը Վարդ աստվածության անվան հետ[51], որը պաշտվում էր որպես ծագող արևի ուժի լիությունն ունեցող շնորհատու աստվածություն. այդ անվան ձևափոխումների՝ Վահե, Վահագն անունների հետ։ Այդ զուգորդությունները բերել են ինձ այն եզրակացության, որ Վարդավառ բառի այլ ձևն է Վահե վահ և Վահեվահյան մեհյանը, նույնն է թե Վարդավառյան մեհյան, իսկ վարդապետ անունը սկզբում տրվելիս է եղել Ապոլլոնի նման իմաստություն, լուսավորություն, միտք տվող աստվածության քուրմին։

Ինչպես հայաբնակ գրեթե բոլոր գավառներում, նաև Զանգեզուրում Վարդավառի տոնին սովորություն էր իրար վրա ջուր սրսկելը, նույնիսկ աշխատում էին առվի կամ գետակի ջրի մեջ գցել։ Այսպիսով շեշտում էին արևի շողերի բարերար ուժը՝ ջրի բարերար ուժի հետ շաղկապված լինելը և արևի ճառագայթի կենարար ազդեցությունը ջրով ողողված լինելու դեպքում։ Ջուր սրսկելու այս սովորությունը, սակայն, մի քանի գյուղերում, օրինակ՝ Գորիսում և Կապանի շատ գյուղերում, չենք պատահում։ Գուցե այն ըմբռնումից, որ Վարդ՝ Վահագն աստվածը արևադարձի օրն արդեն իր լիակատար շափահասության հասած մի երիտասարդ է, որն արդեն լիովին ընդունակ է ամուսնության, ծագել է մի այլ սովորություն, որը Վարդավառի տոնի հետ է շաղկապված Զանգեզուրում։ Այն է՝ Գռնլում, հա՜յ երգելու և վիճակ հանելու սովորությունը, որտեղ երգում են հատկապես աղջիկները, աշխատելով գուշակել, թե երիտասարդներից ո՞վ է և ինչպիսին է իրենցից ամեն մեկին վիճակվելու։ Գռնլումնէր երգելն ու վիճակ հանելը Զանգեզուրում շատ ավելի պարզ ձևեր է ունեցել, քան թե այլ հայաբնակ վայրերում։ Մի քանի գյուղերում, մանավանդ Սիսիանի նոր եկողների համայնքների մեջ, այս երգերն ու վիճակ հանելը տեղի էր ունենում Համբարձման օրը։ Զանգեզուրի բնիկների գյուղերում տղաներն ու աղջիկներն առանձին-առանձին խրվլիկի էին տալիս։ Ամեն մի թաղի աղջիկները շաբաթ երեկոյին, մութն ընկնելուց հետո հավաքվում էին իրար հետ մի օթախում, մեջտեղը դրած մէժմանու վրա սիրուն շարում էին իրենց բերած վարունգը, խնձորը և նոր հասած պտուղները, ամեն մեկն իր առջև դնում էր վրբիվէր կոչած ծաղիկից հյուսած մի խաչ, և սկսում էին Գռնլում, հա՜յ քառյակներ երգել[52]։ Հենց գռնլ բառը, որը հայկական վարդ բառի իրանական ձևն է, առնչություն ունի նախնական ժամանակներում այդ օրը մեծարվող աստվածության անվան հետ և առիթ է տալիս եզրակացնելու, որ Վրբիվէրին վիճակ հանելու սովորությունն ավելի հնագույն է, քան թե Համբարձման տոնին հանելը։ Հաջորդ օրը տեղի էր ունենում Վիճակ հանելը։ Մի փարշի մեջ յոթ աղբյուրներից մի-մի հափուռ՝ բուռ ջուր էին ածում։ Աղջիկներից յուրաքանչյուրը մեջը ձգում էր մի-մի մանր իր՝ մատանի, գնդասեղ, կոճակ և այլն։ Բացակայողներն էլ ուղարկում էին մեջը ձգելու համար իրենց

---

51 Համամիութենական գիտությունների ակադեմիայի Տփղիսի ճյուղ՝ Кавказский Археологический институт-ի նիստում իմ կարդացած՝ «Тигран Великий по монетам» զեկուցման մեջ Տիգրան անունը բացատրելիս, այդ անվան հետ համադրում էի նաև Վարդան անունը և գտնում, որ երկուսն էլ ծագել են աստվածների անուններից, ինչպես Տիրան, Միհրան անունները և այսպիսով գոյություն է ունեցել Վարդ աստվածը, որի այլ ձևն է Վահե կամ Վահ։ Այստեղից Վահագն, Վահունի և վարդապետ։ Վերջինս որպես Վարդ աստծուն ծառայող քուրմ։ Զեկուցումը լույս տեսավ Գիտական ժողովածուում, նվիրված Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին, Երևան, 1941 թ.։ Սակայն խմբագրության կողմից անունների այդ մեկնաբանությանը նվիրված հատվածը մի քանի այլ մասերի հետ կրճատվեց տեղի սղության պատճառով։

52 Լալայեան Ե., Զանգեզուր, էջ 113—116, Սիսիան, էջ 161—170։